

2013թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների  
վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 477 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2013թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 477 հարկ վճարողների 2012 և 2013 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2013թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 773.7 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 6.5%-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են են 4.5 %-ով և կազմել 251.7 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 109.2 մլրդ դրամ նախորդ տարվա նույն եռամսյակի 103.5 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2013թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 45.4 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2013թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 84.4 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2013թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 50.2%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 222 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 74 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 10.1 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2013թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 100.3 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 67.9 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 43.9 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 5.6 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 1.8 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 6554 մարդով կամ 4.6%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 14.8%: